ԷՋԵՐ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՑ

ԵՐԿՈՒ ՀԱՅՐ

1869-ի կոտորածի ձմեռն էր: Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին: Նրանց մեջն էր ծերունի Տեր Սարգիսը:

— Հայրիկի Աջը կուզեմ համբուրել,—խնդրեց նա վեհարանում, ու ներս թողին:

— Բարով, Տեր Հայր,—Աջը մեկնեց Հայրիկը:

Քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված:

— Ո՞րտեղից կուգաս:

— Սասունի կողմերեն, ես Ա-ի Տեր Սարգիսն եմ:...

— Ա-ի Տեր Սարգի՞սը...

— Այո՛, Հայրիկ:

— Է՞...

— Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կոտորեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալանեցին, մնացի այսպես...

— Է՜ հիմի...

— Ես ոչինչ չեմ ուզում Հայրիկ, ես... այնպես եկել եմ... եկել Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր և ոչինչ չէր ուզում:

Երկուսն էլ լուռ էին:

— Քանի՞ որդի կորցրիր, Տեր Սարգիս,—գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

— Ամենքը միասին քսան, Հայրիկ:

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար,—պատասխանեց Հայրիկը,—այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, Տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

— Ո՞ւմ վիշտն է մեծ, Տեր Սարգիս:

— Հայրիկինը:

— Դե ե՛կ, Տեր Սարգիս, մոտ եկ, աջդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ ու աչքերը լցվեցին արցունքով...

Նա օրհնում էր Հայոց կաթողիկոսին... նրա առջև խոնարհած էր Հայոց Հայրիկը...